ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 384-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

---- ---------- 2024 թվականի N ------- -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի N 384-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն որոշում է.

1, Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մարտի 14-ի «Բուսաբուծության աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 384-Լ որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումներն ու փոփոխությունը.

- 2-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-րդ կետով՝

«2,1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 27-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերում 2024 թվականի մայիսի 25-26-ը տեղացած հորդառատ անձրևներով պայմանավորված հեղեղումների պատճառով առաջացած արտակարգ իրավիճակի հետևանքով Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերի մի շարք համայնքներում աղետի գոտիներ հայտարարելու, դրանց տարածքները սահմանելու և բնակչության պաշտպանության հիմնական միջոցառումներն իրականացնելու մասին» N 772-Ն որոշման հավելվածով հաստատված ցանկում ներառված համայնքներում մոնիթորիգի արձանագրությամբ հաստատված «Բուսաբուծության աջակցության» ծրագրի շրջանակներում իրականացված ցանքերին հասցված վնասներից տուժած

շահառուներին տրվում է փոխհատուցում սույն ծրագրով հաստատված սահմանաչափերով».

- Որոշման հավելվածի 17-րդ կետում «պատճենները» բառից հետո լրացնել «, իսկ արտերկրից ներկրված սերմերի հավաստագրում նշված ժամկետը լրացված լինելու դեպքում ներկայացվում է նաև «Գյուղատնտեսական հետազոտությունների և հավաստագրման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից տրված սերմերի որակի փորձաքննության արձանագրությունը, որով հավաստվում է, որ սերմացուն համապատասխանում է պետական նորմատիվային փաստաթղթի պահանջներին» բառերով.
- Որոշման հավելվածի 24-րդ կետում «կամ անձը հաստատող փաստաթղթի հիման վրա բանկային կամ փոստային ծառայության միջոցով» բառերը փոխարինել «, որոնք բռնագանձման ենթակա չեն» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի գործողությունը տարածվում է մարտի 14-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Հայաստանի Հանրապետության

վարչապետ Ն. Փաշինյան